ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 223 Ա

„24" հուլիս 2024թ.

ք.Արտաշատ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՏԱՓԻ ՍԱՐԳԻՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ «ՈՍԿԵՏԱՓԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՄԻԱՁՈՒԼՄԱՆ ՁԵՎՈՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԴՐԱ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հուլիսի 4-ի N 1054-Ա որոշման 5-րդ կետի պահանջով

ՈՐՈՇՈՒՄ Ե Մ

1. «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոսկետափի Սարգիս Հովհաննիսյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության սեփականության իրավունքով և անհատույց օգտագործման իրավունքով պատկանող գույքի, պարտավորությունների կազմի ճշտման գործընթացը, «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոսկետափի Սարգիս Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության փոխանցման ակտի կազմման և հանձնման-ընդունման աշխատանքների իրականացման նպատակով ստեղծել հանձնաժողով և հաստատել հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին՝ կազմակերպել

1) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոսկետափի Սարգիս Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության օրենսդրությամբ սահմանված պետական գրանցումը.

2) «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոսկետափի Սարգիս Հովհաննիսյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության սեփականության իրավունքով և անհատույց օգտագործման իրավունքով գույքի, պարտավորությունների կազմի ճշտման գործընթացը, «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոսկետափի Սարգիս Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ միաձուլման պայմանագրի և փոխանցման ակտի հաստատման, գույքի հանձնման-ընդունման աշխատանքները, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոսկետափի Սարգիս Հովհաննիսյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության դադարման պետական գրանցման աշխատանքները.

3) աշխատանքները սկսել 2024 թվականի հուլիսի 29-ին և ավարտել սեպտեմբերի 16-ին:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի տեղակալ Արտավազդ Նազարեթյանին:

ՄԱՐԶՊԵՏ՝

24.07.2024

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826 Ս. ԹԵՎՈՆՅԱՆ

Հավելված

ՀՀ Արարատի մարզպետի

24 07 2024թ N որոշման

223-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Նախագահ

Մարտուն Մանուկյան – ՀՀ Արարատի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

Անդամներ

Լեռնիկ Խաչատրյան – ֆինանսական վարչության պետ

Հրաչ Դավթյան – իրավաբանական բաժնի պետ

Ալբերտ Մկրտչյան - կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ

Թորգոմ Պետրոսյան - <<Ոսկետափի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի (այսուհետև՝ կազմակերպություն) տնօրեն

Մայիս Ղևոնդյան - կազմակերպության հաշվապահ

Արա Կարապետյան – կազմակերպության տնտեսվար

Վարթեր Հովակիմյան – կազմակերպության անձնակազմի կառավարման մասնագետ

Անի Միրանյան – կազմակերպության էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ:

Recoverable Signature

Ստորագրող
ԱՐԹՈՒՐ ՄԿՐՏՉՅԱՆ
3414870525

X

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Signed by: MKRTCHYAN ARTUR 3414870525 Ա. ՄԿՐՏՉՅԱՆ